

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022թ. փետրվարի 4-ի թիվ 35-Ա որոշում

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ առողջապահության նախարարություն

Հաշվեքննության առարկան

2021 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2021թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

Հաշվեքննության կատարման ժամկետը

2022թ. փետրվարի 14-ից մինչև 2022թ.ապրիլի 30-ը

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն
Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը

Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագույանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ	5
3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	5
4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
4.1 «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի վերաբերյալ.....	7
➤ Աշխատանքի վարձատրություն	8
➤ Տրանսպորտային նյութեր	11
➤ Ներքին գործուղում.....	15
➤ Նախարարության կարիքների համար իրականացված գնումների վերաբերյալ.....	16
4.2 Պետական պատվերի շրջանակներում մատուցված ծառայությունների վերաբերյալ	17
➤ Համամասնորեն ֆինանսավորվող միջոցառումներ	19
➤ Դեպքերի անհատական վարում (case management).....	23
➤ Ընթացիկ հսկողություն	31

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
Նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՊԱԳ	Պետական առողջապահական գործակալություն
ԲԿ	Բժշկական կենտրոն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԱԱՊԿ	Առողջության առաջնային պահպանման կենտրոն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀԾՀ	Հանրային ծառայության համարանիշ

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

«ՎՎ առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում ՎՎ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության առաքելությունն է առողջապահության զարգացման քաղաքականության, պետական նպատակային ծրագրերի մշակումը, դրանց իրականացման կազմակերպումը, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առաջնային և մասնագիտացված բժշկական օգնության ու ծառայությունների ապահովման կազմակերպումը, մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, բնակչության առողջության բարելավման միջոցառումների կազմակերպումը և առողջական վիճակի ուսումնասիրությունը, հաշմանդամության ու մահացության նվազեցման ծրագրերի մշակումը և իրագործումը:

Առողջապահության բնագավառում միջազգային ու միջգերատեսչական համագործակցության ապահովումը, երեխաների, կանանց կեցության և առողջության իրավիճակային վերլուծության կազմակերպումը, ոլորտի գերակա խնդիրների սահմանումը, նպատակային ծրագրերի մշակումն ու ներդրումը, առողջապահության բնագավառին առնչվող օրենսդրական, իրավական ակտերի նախագծերի մշակումը, ընդունված իրավական ակտերի նկատմամբ վերահսկողության ապահովումը, համակարգի գործունեության կազմակերպումը, կառավարումն ու ֆինանսավորումը ևս իրականացվում է ՎՎ առողջապահության նախարարության կողմից:

Նախարարության աշխատանքների կազմակերպումն ուղղված է ՎՎ ողջ տարածքում մարչելի ու որակյալ առողջապահական ծառայությունների ապահովմանը:

3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՎՎ 2021թ. պետական բյուջեի մասին» ՎՎ օրենքի համաձայն Նախարարությանը բյուջետային ընդհանուր թվով 15 ծրագրերի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 114,497,192.3 հազ. դրամ, որը տարվա ընթացքում ավելացվել է 44,102,209.4 հազ. դրամով: Արդյունքում 2021թ. տարեկան ճշգրտված պլանը կազմել է 158,599,401.7 հազ. դրամ:

Նախարարության կողմից իրականացվող ծրագրերի ցուցանիշները և փաստացի կատարողականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.
հազ. դրամ

	Ծրագրի անվանում	Տարեկան պլան	Տարեկան ճշգրտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	ԸՆԴԱՄԵՆԸ	114,497,192.3	158,599,401.7	157,359,655.2	156,076,002.7
1	Հանրային առողջության պահպանում	8,626,568.8	41,118,097.6	40,997,098.5	40,247,206.6

2	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	27,205,517.3	34,410,039.8	34,066,206.5	34,066,206.5
3	Առողջության առաջնային պահպանում	27,882,490.3	28,593,075.8	28,444,142.2	28,444,142.2
4	Մոր և մանկան առողջության պահպանում	19,082,132.3	19,271,876.1	19,245,740.7	19,245,740.7
5	Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	15,801,989.1	17,395,021.9	17,340,845.7	17,340,845.7
6	Շտապ բժշկական օգնություն	5,000,000.0	4,950,000.0	4,934,512.0	4,934,512.0
7	Դեղապահովում	3,490,799.4	3,939,779.4	3,868,656.4	3,690,994.6
8	Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր	3,030,270.2	3,459,378.1	3,097,254.2	2,846,119.4
9	Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր	2,609,895.2	2,564,246.9	2,524,370.4	2,524,370.4
10	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	991,878.8	2,000,200.9	1,951,313.1	1,647,307.3
11	Դատաբժշկական և փխտաբանաանատոմիական ծառայություններ	502,949.3	640,247.6	638,795.0	638,795.0
12	Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ	271,261.6	241,261.6	236,548.6	236,548.6
13	Սոցիալական փաթեթների ապահովում	-	12,276.0	10,272.0	10,272.0
14	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	1,440.0	3,900.0	3,900.0	3,900.0
15	Ռազմական դրությամբ պայմանավորված առողջապահական միջոցառումների ապահովում	-	-	-	199,041.8

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախարարության կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության 2021թ. փաստացի ծախսը կազմել է 156,076,002.7 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 157,359,655.2 հազ. դրամ:

Հաշվետվության մաթեմատիկական ճշգրտությունը ստուգելու համար կիրառվել է ճշգրտության ստուգման ընթացակարգը, որի շրջանակներում կատարվել է ծրագրերի ծախսային ընդհանուր ցուցանիշների և գործառնությունների հանրագումարի համադրում, ինչի արդյունքում պարզվել է, որ ծրագրերի համար իրականացված ծախսերի ցուցանիշը համապատասխանում է առանձին հոդվածների ցուցանիշների հանրագումարին:

Դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության դեբիտորական պարտքը 31.12.2021թ. կազմել է 3,399,226.08 հազ. դրամ, որը հիմնականում ձևավորվել է Նոր կորոնավիրուսային համավարակի պատվաստանյութի ձեռքբերման (2,044,876.07 հազ. դրամ) և Դեղապահովման ծրագրի (832,720.96 հազ. դրամ) շրջանակներում պահուստավորված միջոցների հաշվին:

Կրեդիտորական պարտքերը 31.12.2021թ. դրությամբ կազմել են 1,993.87 հազ. դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է էներգետիկ, կոմունալ և կապի ծառայությունների 2021թ. դեկտեմբեր ամսվա փաստացի ծախսը հաջորդ տարի վճարելու հանգամանքով պայմանավորված պարտքի առաջացմամբ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2021թ. դեկտեմբերի 16-30-ն ընկած ժամանակահատվածում ԲԿ-ների կողմից Նախարարությանը մատուցած ծառայությունների համար փաստացի վճարումը իրականացվել է 2022թ.՝ տվյալ տարվա բյուջետային միջոցների հաշվին: Նախարարությունը չպահպանելով ՀՀՀՀՀՀ ստանդարտի պահանջները, 2021թ. դեկտեմբերի 16-30-ն ընկած ժամանակահատվածում փաստացի մատուցված ծառայությունների համար ծախսագրում չի իրականացրել, այն որպես կրեդիտորական պարտք չի ճանաչել և դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվության մեջ չի ներառել:

4.1 «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի վերաբերյալ

«ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն «Առողջապահության ոլորտի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի իրականացման համար 2021թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 991,878.8 հազ. դրամ, որից 858,352.3 հազ. դրամն ուղղվել է աշխատանքի վարձատրությանը, այդ թվում՝ 667,607.3 հազ. դրամը նախատեսվել է «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ - 411» հոդվածով, 137,595.1 հազ. դրամը՝ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ - 412» հոդվածով, 53,149.9 հազ. դրամը՝ «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում - 413» հոդվածով:

Աղյուսակ 2
հազ. դրամ

Հոդվածի կոդ	Հոդված	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	ԸՆԴԱՄԵԼԸ	991,530	1,091,003	1,084,431	1,079,849
41100	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	667,607.30	669,399.29	669,399.29	667,545.16
411200	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	137,595.10	229,111.20	229,098.45	229,098.45
411300	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	53,149.90	53,149.90	53,149.90	53,149.90
421200	- Էներգետիկ ծառայություններ	30,300.00	20,800.00	20,140.42	20,766.46
421300	- Կոմունալ ծառայություններ	718.40	718.40	622.26	647.46
421400	- Կապի ծառայություններ	9,558.90	6,550.90	4,618.15	4,505.36
421500	- Ապահովագրական ծախսեր	320.00	485.00	485.00	485.00
422100	- Ներքին գործուղումներ	9,779.30	9,279.30	5,638.60	5,638.60
423200	- Համակարգչային ծառայություններ	65,322.00	76,006.20	75,211.15	75,211.15
423400	- Տեղեկատվական ծառայություններ	450.00	-	-	-
423500	- Կառավարչական ծառայություններ	-	9,700.01	9,700.00	9,700.00
423700	- Ներկայացուցչական ծախսեր	1,500.00	1,500.00	991.81	909.27
424100	Մասնագիտական ծառայություններ	400.00	972.00	744.32	744.32
425100	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	2,129.40	-	-	-
425200	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	3,457.00	3,643.80	3,579.84	3,579.84

426100	- Գրասենյակային նյութեր և հագուստ	1,698.00	1,698.00	1,352.22	1,500.99
426400	- Տրանսպորտային նյութեր	7,094.50	7,539.10	7,538.70	3,682.12
426700	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	450.00	450.00	367.86	691.59
482300	- Պարտադիր վճարներ	-	-	1,792.59	1,993.59

➤ Աշխատանքի վարձատրություն

(411100-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, 411200-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, 411300-Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում)

«Առողջապահության ոլորտի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի իրականացման համար ՀՀ վարչապետի 11.06.2018թ. թիվ 706-Ա որոշման համաձայն Նախարարության համար սահմանվել է 180 հաստիքային միավոր, որն ԱՆ նախարարի 06.03.2019թ. թիվ 27-Ա հրամանի համաձայն բաշխվել է՝ կենտրոնական ապարատ 103 (քաղաքական և հայեցողական պաշտոններ 15, քաղաքացիական պաշտոններ 82, տեխնիկական սպասարկող անձնակազմ 6), լիցենզավորման գործակալություն 7, պետական առողջապահական գործակալություն՝ 70 (քաղաքացիական պաշտոններ 63, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող 7):

ՀՀ կառավարության 18.02.2021թ. թիվ 217-Ն որոշման համաձայն «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի բյուջեով նախատեսված 27,205,517.3 հազ.դրամից 610,516.1 հազ.դրամը պակասացվել և տեղափոխվել է այլ ծրագրերի վրա, որից 70,516.1 հազ. դրամը ուղղվել է «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ - 4112» հոդվածին:

Նախարարությունը 2021թ. դեկտեմբերի 16-ին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ միջծրագրային վերաբաշխում կատարելու առաջարկությամբ՝ համաձայն որի առաջարկվել է «Հանրային առողջության պահպանում» ծրագրից 51,000.0 հազ. դրամ պակասեցնել, որից՝ 30,000.0 հազ. դրամը ուղղել «Տուբերկուլիոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրին, իսկ 21,000.0 հազ. դրամը՝ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ - 4112» հոդվածին:

Համաձայն ՀՀ կառավարության 2021թ. բյուջետային ուղերձի «Ծախսերի ծրագրավորման սկզբունքներն ըստ առանձին ծախսային ուղղությունների»՝ աշխատավարձի ֆոնդ բաժնի 5-րդ պարբերության համաձայն, Պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը նախատեսվել է նրանց 2020թ. աշխատավարձի ֆոնդի 10%-ի չափով: Միաժամանակ, բոլոր մարմինների համար նախատեսվել է պարգևատրման ֆոնդ, որը պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի հետ միասին կազմել է պարգևատրման ֆոնդի հաշվարկման համար հիմք հանդիսացող աշխատավարձի ֆոնդի 30%-ը:

Նախարարության կողմից կատարված վերաբաշխումների արդյունքում պարգևատրման ֆոնդը կազմել է 2020 և 2021թթ. պետական բյուջեով հաստատված աշխատավարձի ֆոնդի 42.28%-ը (նախատեսված 30% գերազանցվել է 12.28%-ով):

ԱՆ դիրքորոշում: Ըստ ՀՀ կառավարության 2021թ. բյուջետային ուղերձի՝ բոլոր պետական մարմինների պարգևատրման ֆոնդը (4112 և 4113 հոդվածներով) իրենից ներկայացնում է աշխատավարձի ֆոնդի 30%-ը: 2021թ. տարվա սկզբին, ԱՆ պարգևատրման ֆոնդը կազմել է 190,745.0 հազ դրամ կամ 28,6%: Վերոնշյալ ուղերձը դիտարկվում է որպես հիմք ծախսերը պլանավորելիս: Համաձայն ՀՀ կառավարության 30.12.20թ. թիվ 2215-Ն որոշմամբ հաստատված Հավելված 12-ի 8-րդ կետի սահմանված է, որ յուրաքանչյուր պետական

մարմնի կողմից իրականացվող ծրագրերի համար նախատեսված բյուջեային միջոցներն արդյունավետ, օգտավետ և (կամ) խնայողաբար/տնտեսող կառավարելու արդյունքում առաջացող տնտեսամաս կարող է ուղղվել այդ պետական մարմնի աշխատակիցների պարգևատրմանը: Հետևաբար 2021թ. դեկտեմբերի 16-ին Ֆինանսների նախարարությանը ներկայացված 21,000.0 հազ. դրամի ծանուցումը հաշվարկվել է բացառապես տնտեսման հաշվին, մասնավորապես «Իմոնականիսարգելման ազգային ծրագիր» միջոցառմամբ առաջացած տնտեսումների հաշվին (ոչ գնումների ընթացակարգերի արդյունքում ձևավորված, այլ արտարժույթի փոփոխմամբ առաջացած տնտեսումներ):

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ բյուջեային ուղերձը «Բյուջեային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանում է բյուջեի հավելված, և դրանով սահմանված չափաքանակները ենթակա չեն փոփոխման:

Նախարարությունը 2021թ. դեկտեմբերին կատարել է 15,787.0 հազ. դրամի ներքին վերաբաշխում, որից 1,791.9 հազ. դրամն ուղղվել է «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ - 4111» հոդվածին, այն դեպքում, երբ սահմանված թվով 180 հաստիքային միավորը 2021թ. ընթացքում փոփոխության չի ենթարկվել:

2021թ. ճշտված նախահաշվով աշխատավարձի հոդվածով նախատեսվել է 951,660.4 հազ.դրամ՝ 669,399.3 հազ. դրամը՝ 4111 հոդվածով, 229,111.2 հազ.դրամը՝ 4112 հոդվածով, իսկ 53,149.9 հազ.դրամը՝ 4113 հոդվածով: Նախարարության կողմից ներկայացված «Հիմնարկների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» 2021թ. հաշվետվության համաձայն, «Աշխատանքի վարձատրություն» հոդվածով ճշգրտված նախահաշվով նախատեսված 669,399.3 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 669,399.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 667,545.2 հազ. դրամ, դեբիտորական պարտքը՝ 1,854.2 հազ.դրամ:

Աղյուսակ 3-ում ներկայացվել է 2021թ. ճշգրտված բյուջեով նախատեսված պլանը, դրամարկղային և փաստացի ծախսերը:

Աղյուսակ 3
հազ.դրամ

Հոդվածի անվանումը	2021 թվական				
	Պետական բյուջեով հաստատված	Ճշգրտված նախահաշիվ	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Դեբիտորական պարտք
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	667,607.3	669,399.29	669,399.29	667,545.16	1,854.13
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	137,595.1	229,111.2	229,098.45	229,098.45	-
Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	53,149.9	53,149.9	53,149.9	53,149.9	-
Ընդամենը աշխատողների աշխատավարձեր	858,352.3	951,660.39	951,647.64	949,	1,854.13

Նախարարության կողմից ներկայացված «Հիմնարկների դեբիտորական կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» 2021թ. հաշվետվության համաձայն, դեբիտորական պարտքը 31.12.2021թ. կազմել է 1,937.4 հազ. դրամ (այդ թվում՝ աշխատավարձի գծով 209.9 հազ.դրամ, եկամտային հարկի գծով՝ 1,359.1 հազ. դրամ, պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդին վճարումների գծով՝ 368.01 հազ.դրամ, դրամաշնորհային վճարի գծով՝ 0.5 հազ. դրամ), որից 1,854.2

հազ. դրամն առաջացել է 2021թ. ընթացքում, իսկ 83.3 հազ. դրամը՝ նախորդ տարիներից¹:

Հաշվեքննության շրջանակներում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

1. Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի անհամապատասխանության հետևանքով ավելի և պակաս վճարումներ՝

- Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցը նախատեսված ավելի բարձր սահմանելու հետևանքով բյուջեից կատարվել է 1,678.87 հազ.դրամ ավելի է վճարում (օտարերկրյա ներդրումների բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ս.-ին՝ 217.25 հազ. դրամ, իրավաբանական վարչության օրենսդրության կատարելագործման և վերլուծության բաժնի պետ Կ.-Ա.-ին՝ 119.92 հազ. դրամ, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ.Հ.-ին՝ 90.06 հազ. դրամ, առաջին բաժնի գլխավոր մասնագետ Լ.Մ.-ին՝ 48.73 հազ. դրամ, ՊԱԳ-ի առողջապահական և ֆինանսական ցուցանիշների ծրագրավորման, հոսքերի կառավարման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Ս.Շ.-ին 87.91 հազ. դրամ, ՊԱԳ-ի պահակ Վ.Հ.-ին՝ 1,115.0 հազ. դրամ):
 - Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման նախատեսված գործակցը պակաս սահմանելու հետևանքով պակաս է վճարվել 48.68 հազ. դրամ (ՊԱԳ-ի պետի տեղակալ):
 - Միջին աշխատավարձը սխալ հաշվարկելու արդյունքում բժշկական օգնության քաղաքականության վարչության խորհրդատու Ա.Ս.-ի արձակուրդայինը պակաս է վճարվել 13.06 հազ. դրամով:
2. Չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի (աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամը), 144-րդ հոդվածի 5-րդ մասի (արտաժամյա չի համարվում կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց՝ սահմանած աշխատաժամանակը գերազանցող աշխատանքը: Այդ պաշտոնների ցանկը սահմանվում է ներքին կարգապահական կանոններով), ինչպես նաև 145-րդ հոդվածի (արտաժամյա աշխատանքը թույլատրելու բացառիկ դեպքերը) պահանջները քաղաքացիների բողոքների և դիմումների արագ արձագանքման բաժնի պետ՝ Հ.Հ.-ին ավելի է վճարվել 410928 դրամ (2021թ. 9 ամիսների համար): Գլխավոր քարտուղարի 16.07.2021թ N417-Ա հրամանի համաձայն 2021թ հուլիսի 19-ից, ուժը կորցրած է ճանաչվել 29.06.2018թ N216-Ա հրամանը::
3. Չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար աշխատակիցների ամենամյա հասանելիք արձակուրդը լիարժեք չի տրամադրվել տվյալ աշխատանքային տարում: Միայն 2021թ. տարեսկզբին 2018-2020թթ. չտրամադրված

¹ ՀՀ ՀՊ կողմից ՀՀ ԱՆ 2021թ. պետական բյուջեի ինն ամիսների կատարման հաշվեքննության շրջանակներում արձանագրվել էր Ն. Պ. ավելի վճարված աշխատավարձ: Առձեռն ավելի վճարված գումարից 40.84 հազ.դրամը ետ է վերադարձվել (17.01.2022թ.), իսկ 99.0 հազ.դրամը վերջինիս աշխատավարձից պակաս է վճարվել 2022թ. հունվար և փետրվար ամիսներին:

արձակուրդի օրերի թիվը կազմել է 485 աշխատանքային օր, որը տրամադրվել է 2021թ. ընթացքում:

4. Արձակուրդում գտնվող աշխատակցին (Ն.Պ.) վճարվել է աշխատավարձ 208902 դրամի չափով: 208.9 հազ. դրամից առձեռն ավելի վճարված 139.9 հազ.դրամից 40.84 հազ.դրամը աշխատակցի կողմից 17.01.2022թ. վերադարձվել է տարանցիկ հաշվին, իսկ 99.0 հազ.դրամը պահվել է 2022թ. հունվար և փետրվար ամիսների աշխատավարձից:
5. ՊԱԳ-ի գլխավոր մասնագետ Ա.Բ.-ի կողմից ներակայացրած անաշխատունակության թերթիկը հաշվի չառնելու հետևանքով կատարվել է անաշխատունակության նպաստի սխալ հաշվարկ և վճարում:
6. Չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը՝ չի հատկացվել հղիության և ծննդաբերության սահմանված չափով արձակուրդ (Ա.Շ.):

ԱՆ դիրքորոշում: Աշխատավարձի, անաշխատունակության նպաստի և արձակուրդայինի հաշվարկման և վճարման հետ կապված անհամապատասխանությունները արձանագրվել են 2021թ. 9 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքի շրջանակներում, որոնց մասով Առողջապահության նախարարությունը ներկայացրել է իր պարզաբանումները: Բացի այդ արձանագրված անհամապատասխանությունները նախկինում կատարված խախտումներ են, որոնց մասով Առողջապահության նախարարությունը չի կարող իրականացնել միջոցառումներ, մասնավորապես ավել վճարված գումարները հետ վերադարձնելու կամ պակաս վճարվածները՝ վճարելու: Նույնը վերաբերվում է նաև պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի և պարզևապրման չափի անհամապատասխանություններին: Մասնավորապես, այս մասով արձանագրվածը ևս ներառվել է 2021թ. 9 ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքում և արդեն իսկ այն աշխատակիցների համար, որոնց մասով արձանագրվել է անհամապատասխանություններ, հայտարարվել են մրցույթներ և պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը համապատասխանում է զբաղեցրած պաշտոններին: Արձանագրված անհամապատասխանությունները այս մասով ընդունվել են ի գիտություն՝ այսուհետ բացառելու նպատակով: Համաձայն ՀՀ կառավարության 21.10.21թ. թիվ 1723-Ն որոշման, Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի փեղակալ Վ. Հ. ներգրավված է եղել կենտրոնական բժշկական հանձնաժողովում՝ որպես նախագահ: Տարեվերջին, Վ.Հ.-ն պարզևապրվել է՝ հաշվի առնելով վերջինիս կատարած աշխատանքը՝ վերոնշյալ հանձնաժողովում:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ անհրաժեշտ է ավելի վճարված գումարները ետ վերադարձնել, իսկ պակասները՝ վճարել:

➤ **Տրանսպորտային նյութեր**

2021թ. 6 ամիսների հաշվեքննության արդյունքների վերաբերյալ.

ՀՀ կառավարության 17.05.2005թ. «ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» թիվ 194-Ն որոշման համաձայն Նախարարությունն ունեցել է թվով 12 ծառայողական ավտոմեքենա:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ Նախարարության հաշվեկշռում առկա է եղել թվով 9 ավտոմեքենա: ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 449-Ա որոշման 2-րդ կետի համաձայն Նախարարության հաշվեկշռից «Տոյոտա LC 150 4.0 GAS» մակնիշի 060 LL 60 պետ համարանիշի ավտոմեքենան դուրս է գրվել՝ 2020թ. ռազմական գործողությունների ժամանակ Շուշի քաղաքի մերձակայքում զինված հարձակման ենթարկվելու և վերջինս այնտեղ թողնելու հանգամանքով պայմանավորված:

Հաշվետու ժամանակահատվածում, ԱՆ հաշվեկշռում եղել է թվով 8 ավտոմեքենա:

Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 17.02.2005թ. «ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» թիվ 194-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ կետի ա) ենթակետի, ինչպես նաև 4-րդ կետի պահանջները՝ նախարարին, նախարարի տեղակալներին, գլխավոր քարտուղարին ծառայողական պարտականությունների կատարման համար հատկացված ծառայողական, ինչպես նաև հաշվեկշռում հաշվառված մյուս ավտոմեքենաները ձևակերպել է որպես հերթապահ ծառայողական ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են պետական մարմինների գործառույթների իրականացման ընթացքում աշխատողների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս անհրաժեշտ տրանսպորտային սպասարկում ապահովելու նպատակով:

Նախարարությունը չի պահպանել հիշյալ որոշման հավելված 1-ի 2-րդ կետի բ) ենթակետի պահանջը՝ գործուղման մեկնող թվով 4 աշխատակիցների չի տրամադրել հերթապահ ավտոմեքենաներ, փոխարենը՝ հատկացրել են բենզինի կտրոններ, վերջիններս իրենց ծառայողական պարտականությունները կատարելու նպատակով գործուղման են մեկնել անձնական օգտագործման ավտոմեքենաներով:

Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության թվով 4 աշխատակիցների կողմից իրականացված 9 գործուղումներից միայն 2-ի դեպքում է ներկայացվել գործուղման վկայական: Նախարարությունը հաշվի չառնելով գործուղման վկայականի (7 դեպք), ինչպես նաև ավտոմեքենայի երթուղային թերթիկի բացակայության հանգամանքը, անձնական ավտոմեքենաներով գործուղման մեկնած աշխատակիցներին տրամադրել է բենզինի կտրոններ:

Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետի 2-րդ պարբերության, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերի պահանջները՝ իրականացված թվով 30 գործուղումների վերաբերյալ բացակայել է փաստացի կատարված գործուղումների և ուղղությունների մասին անհրաժեշտ տեղեկատվությունը:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարությունը 2020թ. դեկտեմբերի 27-ի դրությամբ ունեցել է 4,004.78 հազ. դրամի 13810 լիտր բենզին: Համաձայն Նախարարության 2021թ. բյուջետային հայտի, «Տրանսպորտային նյութեր - 4264» հոդվածով ֆինանսական միջոցների պահանջ չի ներկայացվել: ՀՀ ֆինանսների նախարարությունը, հաշվի չառնելով այս հանգամանքը, 2021թ. ՀՀ պետական բյուջեով վերոնշյալ հոդվածով նախատեսել է 7,094.0 հազ. դրամ (որից 6,800.0 հազ. դրամը՝ բենզին ձեռքբերելու համար): 2021թ. հունիսի 17-ին Նախարարությունը 2021թ. բյուջեով նախատեսված 7,094.0 հազ. դրամի դիմաց ձեռք է բերել 7,538.7 հազ. դրամի 19330 լիտր ռեզուլյար տեսակի բենզին (8307153733 հաշիվ ապրանքագիր): Նախորդ տարվա մնացորդի հետ միասին՝ Նախարարությունը 2021թ. ունեցել է 11,543,48 (4,004.78+7,538.7) հազ.դրամի՝ 33140 լիտր (13810+19330) բենզին:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2021թ. 6 ամիսներին ծառայողական ավտոտրանսպորտային միջոցների շահագործման ու տեխնիկական սպասարկման վերաբերյալ մշակված կարգ չի եղել: ԱՆ գլխավոր քարտուղարի հրամանով (30.12.2020թ., թիվ N4710-Ա) 2021թ. առաջին կիսամյակում յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար հաստատվել է բենզինի առավելագույն չափաքանակներ: Բենզինի առավելագույն չափաքանակները սահմանելիս չի պահպանվել տրանսպորտային

միջոցների տեխնիկական բնութագրերերով 100 կմ հաշվով սահմանված նորմատիվը, ինչպես նաև ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման 1-ին կետի ա) ենթակետով հաստատված հավելված 1-ով սահմանված վառելիքի ծախսի նորմաների ավելացումը (ձմռան և ամռան ժամանակաշրջանի համար առանձին նորմատիվ չի սահմանվել), ինչի հետևանքով որոշ մեքենաների համար բենզինի նորման սահմանվել է ավելին, իսկ որոշների համար՝ պակաս:

Հաշվեքննության ընթացքում «Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթիկ» չտրամադրելու հետևանքով հնարավոր չի եղել գնահատել փաստացի կատարված բենզինի ծախսի, կտրոնների հատկացման, և փաստացի մնացորդի նկատմամբ կատարված գործողությունների արժանահավատությունը:

2021թ. վեց ամիսներին առանց Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթիկների առկայության և փաստացի կատարված վազքի հաշվառման վերաբերյալ տեղեկատվության, ստացականներով առ հաշիվ, 13.790 լիտր բենզինը ձևակերպվել է որպես փաստացի ծախս և դուրս գրվել պահեստից: Այսպես՝

- ✓ Թվով 19 դեպքով միայն ստացականներով՝ առ հաշիվ 2675 լիտր բենզինի կտրոն է հատկացվել, որը հետագայում առանց փաստացի ծախսը հիմնավորող փաստաթղթի ձևակերպվել է որպես փաստացի ծախս,
- ✓ 2021թ. մարտ-հունիս ամիսներին, յուրաքանչյուր ամիս թվով 7 ավտոտրանսպորտային միջոցի հատկացվել է 7255 լիտր բենզին, հետագայում առ հաշիվ հատկացված բենզինը ծախսագրվել է որպես փաստացի ծախս և դուրս գրվել,
- ✓ Միայն 20 դեպքով գործուղումների իրականացման համար առհաշիվ, առանց «Մարդատար ավտոմեքենայի երթուղային թերթիկների» հատկացվել է 1350 լիտր բենզին: Կատարված վերահաշվարկի արդյունքում արձանագրվել է, որ գործուղված տրանսպորտային միջոցների փաստացի կատարած վազքը կազմել է 5635կմ, որի համար անհրաժեշտ բենզինի ծախսը՝ 726.5 լիտր: Առ հաշիվ հատկացված 1350 լիտր բենզինը ձևակերպվել է որպես փաստացի ծախս և դուրս գրվել,
- ✓ Թվով 30 դեպքով, առ հաշիվ՝ ստացականներով հատկացվել է 1095 լիտր բենզին, որը հետագայում ձևակերպել որպես փաստացի ծախս: Գործուղված աշխատակացներին չի վճարվել նաև օրենքով սահմանված օրապահիկը,
- ✓ ԱՆ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամին պատկանող ավտոմեքենային 8 դեպքով, առ հաշիվ՝ ստացականներով հատկացվել է 300 լիտր բենզին: Թվով 8 դեպքից միայն 4-ի դեպքում է եղել գործուղման թերթիկ, որի փաստացի ծախսը կազմել է 117 լիտր: Առ հաշիվ հատկացված 300 լիտր բենզինը ձևակերպվել է փաստացի ծախս և դուրս գրվել,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 28-ին 006ԼԼ55 ավտոմեքենայի վարորդին հատկացվել է 500 լիտր բենզին, սակայն վերջինս 2021թ. հունվարի 22-ին ազատվել է աշխատանքից վառելիքի հանձնում-ընդունում չի իրականացվել և մնացորդ կտրոնները ետ չի վերադարձվել:

2021թ. առաջին կիսամյակում թվով 4 ավտոմեքենաների սահմանված չափաքանակից 2882 լիտրով ավելի բենզին է հատկացվել: Առ հաշիվ հատկացված 13790

լիտր բենզինից համաձայն գործուղման թերթիկի միայն 843.5 լիտր բենզինի ծախսն է հիմնավորվել, իսկ 12,946.5 լիտր բենզինի ծախսը չի հիմնավորվել:

ԱՆ դիրքորոշում: ՀՀ 2021թ. պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» միջոցառման «Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական հոդվածով ծախսը նախատեսված է եղել 7,094.0 հազ. դրամ (22100 լիտր՝ միավոր արժեքը՝ 321 ՀՀ դրամ): 2021թ. ընթացքում կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/7» ծածկագրով գնման ընթացակարգ, որը հայտարարվել է չկայացած՝ նախահաշվային գնից բարձր լինելու հիմքով, մրցույթի ամենացածր գինը եղել է 367,98 ՀՀ դրամ: Նշված մրցույթից հետո կրկին հայտարարվում է նոր մրցույթ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2021/15» ծածկագրով (19330 լիտր՝ 367 ՀՀ դրամ միավոր արժեքով): Նշված մրցույթի ամենացածր միավոր գինը եղել է 390 դրամ, որով էլ կնքվել է պայմանով պայմանագիր: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության՝ պայմանագիր ուժի մեջ է մտել 7,538.7 հազ. դրամ գումարի չափով՝ 19300 լիտր, միավոր արժեքը՝ 390 ՀՀ դրամ: Հաշվի առնելով վառելիք շուկայի առանձնահատկությունները (գների անկանխատեսելի աճ կամ նվազում, ընդամենը 3 մատակարարների մասնակցություն), անկախ բենզինի առկա մնացորդներից գնումը կազմակերպվել է: Ձեռքբերված քանակների հաշվին բավարարվում է նաև 2022թ. կարիքները, քանի որ դեռևս Առողջապահության նախարարությունը չունի կնքված պայանագիր 2022թ. կարիքների համար՝ պայմանավորված է բենզինի շուկայում բարձր գներով՝ գնման ընթացակարգերը չկայացած հայտարարվելու արդյունքում:

«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման հանձնված ավտոմեքենան ետ է վերադարձվել առանց ՀՀ կառավարության համապատասխան որոշման՝ ժամկետի սղությունից ելնելով: Մասնավորապես, 2021թ. սեպտեմբեր ամսվա ընթացքում վերանորոգման կարիք ունեին Առողջապահության նախարարությանը սպասարկող միանգամից թվով 2 ավտոմեքենա, որոնց սպասարկման համար պահանջվում էր ժամանակ և այդ ընթացքում կարիք էր առաջացել սարքին, պիտանի ավտոմեքենայի: Հետևաբար, Առողջապահության նախարարությունը կնքել էր համաձայնագիր ավտոմեքենան ետ վերցնելու նպատակով: Վերոնշյալ ավտոմեքենաները վերանորոգելուց հետո «Նիսսան Սանի 1.6» մակնիշի ավտոմեքենան վերադարձվել է «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին:

Հաշվեքննողի արձագանք: Ընդունվել է ի գիտություն, սակայն հաշվեքննության արդյունքների վրա չի ազդել:

Հերթակառուցական գործընթացի վերաբերյալ:

Հաշվեքննիչ պալատի կողմից ՀՀ ԱՆ 2021թ. պետական բյուջեի 6 ամիսների կատարման հաշվեքննության շրջանակում արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով Նախարարության կողմից կատարվել է որոշակի աշխատանքներ: Մասնավորապես՝

1. Վերականգնվել և ԱՆ պահեստ է մուտքագրվել 417.3 հազ.դրամի 1070 լիտր ավելի հատկացված բենզինը (58 դեպքով արձանագրված գործուղումներ):
2. ՀՀ կառավարության 17.05.2005թ. թիվ 194-Ն որոշման 1-ին հավելվածի պահանջները ապահովելու նպատակով ԱՆ 12.08.2021թ. թիվ 3067-Ա հրամանի 3-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել ԱՆ գլխավոր քարտուղարի 2021թ. 2-րդ կիսամյակի համար սահմանված բենզինի հատկացման վերաբերյալ 02.07.2021թ թիվ 2547-Ա հրամանը, նույն հրամանի 1-ին կետով սահմանվել և հաստատվել է «ՀՀ առողջապահության նախարարության հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ու շահագործման պայմանները, ավտոմեքենաների բաշխման ցանկը»:

2021թ. տարեկան հաշվեքննության արդյունքների վերաբերյալ.

ՀՀ կառավարության 28.12.2017թ. թիվ 1739 որոշման համաձայն Նախարարությանը ամրակցված թվով 4 «Նիսսան Սանի 1.6» մակնիշի ավտոմեքենաները հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Այնուհետև, ՀՀ կառավարության 17.05.2018թ. թիվ 575-Ա որոշման համաձայն թվով 2 «Նիսսան Սանի 1.6» մակնիշի ավտոմեքենաները ետ է վերադարձվել Նախարարությանը: ՀՀ կառավարության 24.12.2020թ. թիվ 2155-Ա որոշման համաձայն «Նիսսան Սենթրա 1.8» մակնիշի (2013թ., պետհամարանիշը՝ 050LL060, նույնականացման համար MNTAB7A97E60022965) ավտոմեքենան 25.01.2021թ. «Գույքի անհատույց օգտագործման մասին» պայմանագրի շրջանակներում անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով, ընդունման-հանձնման ակտով հանձնվել է «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ին:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարության և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 27.09.2021թ. կնքված «Գույքի անհատույց օգտագործման մասին 25.01.2021թ կնքված պայմանագիրը լուծելու մասին» թիվ 01 համաձայնագրով ավտոմեքենան ետ է վերադարձվել Նախարարությանը՝ առանց ՀՀ կառավարության համապատասխան որոշման: 2021թ. սեպտեմբերի 28-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանում հիշյալ մեքենային հատկացվել է 730 լիտր վառելիանյութ:

Տարեկան հաշվեքննության շրջանակներում արձանագրվել է, որ չի պահպանվել ԱՆ նախարարի 12.08.2021թ. թիվ 3067-Ա հրամանի հավելված 1-ի 7-րդ կետի դրույթը (ԱՆ առանձնացված ստորաբաժանումների ավտոմեքենաներին տրվում է ամսական, իսկ մնացած ավտոմեքենաներին շաբաթական ուղեգրեր), բոլոր ավտոմեքենաների համար երթուղային թերթիկները հատկացվել է ամսական կտրվածքով:

Հաշվեքննության ընթացքում կատարված հաշվարկների արդյունքում պարզվել է, որ 2022թ հունվարի 1-ի դրությամբ ԱՆ վառելիանյութի գծով դեբիտորական պարտքը կազմում է 183,78 լիտր (71.6 հազ.դրամ), իսկ կրեդիտորական պարտքը 73.42 լիտր (28.63 հազ.դրամ), ինչը չի արտացոլվել ԱՆ 2021թ. հաշվետվություններում:

➤ **Ներքին գործուղում**

Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման պահանջները՝ գործուղման ծախսերի հատուցումը կատարել է ոչ թե գործուղման մեկնելուց առնվազն մեկ օր առաջ, այլ աշխատակիցների գործուղումից վերադառնալուց հետո՝ կարգով սահմանվածից ուշ: Նշված փաստից հետո անհնար է դառնում գործուղման ծախսերի հաշվառումը 4-րդ եռամսյակի համար, քանի որ Նախարարության ընթացիկ հաշվի գործուղման ծախսերի փոխհատուցման փոխանցումների մեջ ներառվել են 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գործուղումների փոխհատուցումը: Չորրորդ եռամսյակի գործուղման ծախսերը նույնպես փոխհատուցվել են թերի (ոչ ամբողջությամբ), ենթադրվում է, որ դրանք իրականացվել են 2022թ. 1-ին եռամսյակի ընթացքում:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել է, որ 2021թ.4-րդ եռամսյակի ներքին գործուղման փաստաթղթերը լրացվել են թերի, դրանք չեն ստորագրվել գործուղվող աշխատակցի կողմից: Առանձին դեպքերում բացակայել են գործուղման թերթիկը և ծախսերի հաշվետվությունը: Թվով երկու վարորդների Վաղարշապատ և Թալին

կատարած գործուղումների վերաբերյալ բացակայել են գործուղման թերթիկը և ծախսերի հաշվետվությունը:

Հաշվեքննությանը արձանագրվել է, որ թվով 11 դեպքում գործուղման ծախսերի հաշվետվությունները չեն ստորագրվել, սակայն կատարվել է ծախսերի փոխհատուցում :

Թվով 3 դեպքում էլ գործուղման հրամաններին տրվել է հետադարձ ուժ

➤ **Նախարարության կարիքների համար իրականացված գնումների վերաբերյալ**

ԱՆ 25.11.2019թ. ինսուլինների ձեռքբերման նպատակով կնքված գնման պայմանագրի շրջանակներում, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հետ 09.02.2021թ. կնքել է թիվ 2 համաձայնագիրը, որով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն պարտավորվել է ըստ սահմանված ժամանակացույցի մատակարարել ստորև նշված քանակների ինսուլիններ.

1. Կարճատև ազդեցության ինսուլիններ մարդկային 100 ՄՄ/մլ- 1160000 հատ- ընդհանուր 220,284.0 հազ. դրամ,
2. Միջին ազդեցության ինսուլիններ մարդկային 100 ՄՄ/մլ- 1600000 հատ- ընդհանուր 303,840.0 հազ. դրամ,
3. Ինսուլին կարճատև և միջին ազդեցության խառնուրդ մարդկային 100ՄՄ/մլ- 120000 հատ- ընդհանուր 22,788.0 հազ. դրամ:

ԱՆ կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերոնշյալ համաձայնագրով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով հաստատված 20.07.2021-20.10.2021թթ. քանակները «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել: Չմատակարարված քանակները և գումարային արտահայտությամբ ներկայացվել են ստորև.

1. Կարճատև ազդեցության ինսուլիններ մարդկային 100 ՄՄ/մլ- 286400 հատ- ընդհանուր 54,387.360 հազ. դրամ,
2. Միջին ազդեցության ինսուլիններ մարդկային 100 ՄՄ/մլ- 343900 հատ- ընդհանուր 65,306.610 հազ. դրամ:

Հաշվեքննությանը արձանագրվել է, որ նախատեսված գնման ժամանակացույցի շրջանակներում չի մատակարարվել 119,693.970 հազ. դրամ ինսուլիններ: Նախարարության կողմից չմատակարարված ապրանքների, կիրառված տույժ և տուգանքների մասին չի կազմվել ոչ մի արձանագրություն և չի կնքվել համապատասխան համաձայնագիր, որով կնվազեցվեր վերոնշյալ չմատակարարված ապրանքները:

Ըստ վերոնշյալ գնման պայմանագրի 6.2 կետի, այն է՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Արդյունքում Նախարարության կողմից պետք է հաշվարկվեր շուրջ 2,992.0 հազ. դրամի տույժ, որը չի հաշվարկվել և չի գանձվել:

ԱՆ դիրքորոշում: «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/1/1-1» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում 20.07.2021թ.-20.10.2021թ. ժամանակահատվածի համար նախատեսված ընդհանուր 119,693.97 հազ. դրամի ինսուլինների չմատակարարումը Առողջապահության նախարարության

կողմից չի ընդունվում: Քանի որ Մատակարարը գնման ժամանակացույցի համաձայն սահմանված ժամկետում՝ 15.10.2021թ., մատակարարումը կատարել է (կից ներկայացվում է մատակարարումը հիմնավորող փաստաթղթերը):

Հաշվեքննողի արձագանք: Ընդունվել է ի գիտություն: Հաշվեքննության ընթացքում նշված փաստաթղթերը հաշվեքննողներին չի տրամադրվել:

Նախարարության կողմից 18.08.2020թ. կնքված մանկական ինսուլինների ձեռքբերման գնման պայմանագրի շրջանակներում, «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի հետ 26.01.2021թ. և 18.11.2021թ. կնքել է 2 համաձայնագիր, համապատասխանաբար՝ թիվ 1 և թիվ 2 համարներով: Վերոնշյալ համաձայնագրերի շրջանակներում «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն պարտավորվել է ըստ սահմանված ժամանակացույցների մատակարարել մանկական ինսուլիններ համապատասխան քանակների:

Պայմանագրի շրջանակներում «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն Համաձայնագիր թիվ 1-ով ստանձնած 411,578.0 հազ. դրամի պայմանագրային պարտավորությունը կատարել է սահմանված ժամկետներում, իսկ Համաձայնագիր թիվ 2-ով՝ 59,400.0 հազ. դրամի պայմանագրային պարտավորությունները պետք է կատարեր հավելված N 1.2 գնման ժամանակացույցով սահմանված ոչ ուշ քան 15.12.2021թ.: Սակայն «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն 51,975.0 հազ. դրամի համաձայնագրով սահմանված մանկական ինսուլինները մատակարարել է 28.12.2021թ. չպահպանելով պայմանագրային պարտավորությունները:

Գնման պայմանագրի 6.2 կետի համաձայն, այն է՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Արդյունքում Նախարարության կողմից պետք է հաշվարկվեր շուրջ 207.9 հազ. դրամի տույժ, որը չի հաշվարկվել և չի գանձվել:

ԱՆ դիրքորոշում: «ՀՀ ԱՆ ՀՐՄԱՊՁԲ-2020/24» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակում 51,975.0 հազ. դրամի չափով «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ը Առողջապահության նախարարության կողմից ուշացված օրերի համար տույժի չի ենթարկվել, քանի որ վերջինս ներկայացրել է գրություն (կցվում է): Այդ մասով կիրառվել է պայմանագրի «Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)» բաժնի պահանջները:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ դեկտեմբեր ամսին ներկայացված գրության մեջ ընկերությունը հղում է անում համաճարակային իրավիճակին և չվերթների բացակայությանը, մինչդեռ 2021թ. դեկտեմբեր ամսին համաճարակի հետևանքով որևէ առանձնահատուկ սահմանափակում, այն էլ չվերթների համար, չի կիրառվել:

4.2 Պետական պատվերի շրջանակներում մատուցված ծառայությունների վերաբերյալ

2021թ. պետական բյուջեի կատարման հաշվեքննության ընթացքում փաստացի կատարողականի և կատարված վճարումների համապատասխանությունը ստուգելու նպատակով իրականացվել է Էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» և պետական բյուջեի գանձապետական գործառնությունների ԼՍ-ՖԱՅՆԱԼՆՍ համակարգերի տվյալների համադրություն: Համադրության արդյունքում արձանագրվել է հետևյալը.

- 2021թ. առաջին կիսամյակի արդյունքներով ԲԿ-ների կողմից փաստացի մատուցված և Նախարարության կողմից փաստացի ընդունված ծառայությունների ծավալը կազմել է 42,841,649.2 հազ. դրամ, որի դիմաց Նախարարության կողմից

իրականացված համախառն վճարումները կազմել են 36,308,585.2 հազ. դրամ: Ընդ որում, արձանագրվել է ինչպես դրական, այնպես էլ բացասական տարբերություններ: Մասնավորապես, թվով 405 բժշկական կազմակերպության փաստացի և հաստատված կատարողականի դիմաց ԱՆ կողմից պակաս է վճարվել ընդհանուր 7,845,788.5 հազ. դրամ:

- 2021թ. ինն ամիսների համար, հաշվի առնելով այն, որ 2021թ. սեպտեմբեր ամսին մատուցված ծառայությունների համար վճարումը կատարվել է հաջորդ ամիս և դրանք առաջին կիսամյակի գանձապետական գործառնությունների մեջ չեն ներառվել, համադրումը իրականացվել է էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի 2021թ առաջին 8 ամիսների կատարողականի և 30.09.2021թ. դրությամբ գանձապետական գործառնությունների ԼՍ-ՖԱՅՆԱՆՍ համակարգի միջոցով կատարված փոխանցումների հիման վրա: Իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ ընդհանուր թվով 12 դեպքում առկա է «ԱՐՄԵԴ» համակարգի կատարողականից ավելի վճարում՝ 1,382,719.1 հազ. դրամի չափով, ինչը պայմանավորված է եղել նրանով, որ մի շարք միջոցառումների գծով կատարողականները ներկայացվել են ոչ թե ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, այլ թղթային եղանակով: Բացի կատարողականից ավելի վճարումների, միևնույն ժամանակ արձանագրվել է կատարողականից պակաս վճարումների դեպքեր, որի ընդհանուր ծավալը կազմել է 2,981,523.8 հազ դրամ:
- Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 8-րդ կետի պահանջները, կազմակերպությունների համար ֆինանսավորման անհատական համամասնությունները սահմանելիս չի պահպանվել պետական բյուջեով սահմանված եռամսյակային համամասնությունները:
- Մի շարք միջոցառումների համար Նախարարության կողմից պետական բյուջեից ֆինանսավորման 9 ամսվա համար նախատեսված ճշգրտված պլանից պակաս ֆինանսավորման հայտ է ներկայացվել, ինչն էլ հանգեցրել է եռամսյակային համամասնությամբ հատկացված ֆինանսական միջոցների ոչ լիարժեք օգտագործման և լրացուցիչ կրեդիտորական պարտքերի առաջացման, իսկ Նախարարությունը կազմակերպությունների կողմից ներկայացված կատարողականների դիմաց վճարումները իրականացրել է ոչ լիարժեք:
- Մի շարք միջոցառումների դեպքում հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանը զգալիորեն գերազանցել է փաստացի կատարողական ցուցանիշը, ինչը հետևանք է ոչ ճիշտ պլանավորման և պետական բյուջեի միջոցների ոչ արդյունավետ բաշխման:

Հետիսկողական գործընթացի վերաբերյալ. Հաշվեքննության շրջանակներում արձանագրված խնդիրների նկատմամբ իրականացվել է հետիսկողական միջոցառումներ, որի արդյունքում նախ 9 ամիսների արդյունքով զգալի նվազել է կազմակերպություններին կատարված պակաս վճարումները, իսկ փարվա արդյունքներով պայմանագրային պարտավորությունները կատարվել են գրեթե ամբողջ ծավալով:

Նախարարության կողմից պետական պատվերի շրջանակներում բժշկական կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումները

իրականացվել է ֆինանսավորման 2 մեխանիզմների միջոցով՝ համամասնորեն ֆինանսավորում և դեպքերի անհատական վարում:

➤ **Համամասնորեն ֆինանսավորվող միջոցառումներ**

Հաշվեքննության ծածկույթում ընդգրկված «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ», «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» և «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների ֆինանսավորումն իրականացվել է հիմք ընդունելով էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգ բժշկական կազմակերպությունների կողմից յուրաքանչյուր ամիս մուտքագրված փաստացի կատարողականների արդյունքները:

Նշված միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական ցուցանիշները ներկայացվել են աղյուսակում:

Միջոցառում	Հոդված	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	27,369,351.30	27,981,122.70	27,837,384.99	27,837,384.99
Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ	- Այլ նպաստներ բյուջեից	7,043,928.50	6,925,855.60	6,925,610.92	6,925,610.92
Շտապ բժշկական օգնության ծառայություններ	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	5,000,000.00	4,950,000.00	4,934,512.00	4,934,512.00

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների ծրագրով ֆինանսավորումը իրականացվել է ըստ մարդաշնչի՝ տվյալ կազմակերպությունում գրանցված բնակիչների թվաքանակի և մեկ բնակչի համար հաստատված տարեկան նորմատիվի միջոցով (հիմք՝ ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշում): Էլեկտրոնային առողջապահության համակարգում ներդրված է հաշվարկի ինքնաշխատ գործիք, որը փոխկապակցված է ՀՀ բնակչության պետական ռեգիստրի հետ:

Հաշվեքննության շրջանակներում Նախարարության կողմից չի տրամադրվել ըստ բժշկական կազմակերպությունների հաշվառված քաղաքացիների անհատական նույնականացման տվյալները, ինչը սահմանափակել է հաշվեքննությունն իրականացնող խմբի կողմից բնակչության թվաքանակի հիման վրա կատարված ծախսերի հաշվարկման արժանահավատության գնահատման հնարավորությունները:

ԱՆ ՊԻՐՔՐՈՂՈՒՄ: «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգն իրոք փոխկապակցված է ՀՀ բնակչության պետական ռեգիստրի հետ, ինչը թույլ է տալիս բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ինչպես նաև ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում քաղաքացիների հավաքագրման և գրանցման ընթացքում հեշտացնել անձի իդենտիֆիկացումը, բացառել սխալների, կրկնակի գրանցումների հնարավորությունը: Սակայն ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ըստ մարդաշնչի իրականացվող հաշվարկի և ֆինանսավորման ժամանակ գործող ինքնաշխատ գործիքը տվյալները վերցնում է կոնկրետ բժշկական կազմակերպությունում գրանցված անձանց ռեգիստրի, ինչը բնականաբար փոփոխական է և որևիցե օրվա դրությամբ արտահանված ըստ բժշկական կազմակերպությունների հաշվառված քաղաքացիների անհատական նույնականացման տվյալները (բնակչության թվաքանակը) կատարված ծախսերի հաշվարկման արժանահավատության գնահատման հնարավորություն չէր կարող տալ: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ առողջապահության

նախարարության հնարավորության տիրույթում ներկայում գործող էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգի միջոցով անվանական, անձնական տվյալներ պարունակող ցանկով տեղեկատվություն տեխնիկապես հնարավոր չէ ստանալ կամ արտահանել:

Քացի այդ՝ «Անհատական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն անձնական տվյալներ մշակողները կամ սույն օրենքով նախատեսված այլ անձինք պարտավոր են պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո: Իսկ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման» մասին օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն բժշկական գաղտնիք է համարվում պացիենտի առողջական վիճակի մասին կամ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու մասին, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ընթացքում պարզված տվյալներ: Բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են փոխանցվել պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ, բացառությամբ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերի:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն «Հաշվեքննողն իրավասու է տվյալ ծրագրային կետի շրջանակներում հաշվեքննության օբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջելու հաշվեքննության առարկային առնչվող առկա էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն, փաստաթղթեր, անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություն, հաշվապահական հաշվետվություններ, դրանցից դուրս գրելու տեղեկություններ և ստանալու պարզաբանումներ: Օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ տվյալ գաղտնիքի համար օրենքով սահմանված դեպքում և կարգով»: Հաշվի առնելու, որ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով հատուկ կատարողի անձնական տվյալներ ստանալու լիազորություն նախատեսված չէ, նման լիազորություն նախատեսված չէ նաև վերոնշյալ իրավական ակտերում՝ հետևաբար նման տեղեկատվությունը տրամադրելը կհակասեր ՀՀ Սահմանադրության, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ խոսքը վերաբերվում է ոչ թե պացիենտների առողջապահական տվյալներին, այլ տվյալ ամբողջաբար բժշկական կազմակերպությունում հաշվառված քաղաքացիների ՀԾԿ տվյալներին, որոնք առողջապահական տվյալների հետ որևէ առնչություն չունեն:

Համամասնորեն ֆինանսավորվող միջոցառումների փաստացի կատարողականի համապատասխանության գնահատման ժամանակ, Նախարարության համապատասխան պատասխանատու ստորաբաժանումը ԲԿ-ների կողմից ներկայացված ամփոփ հաշվետվության հիման վրա ընդունել է մատուցված ծառայությունը, որից հետո կատարել է վճարումը:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարության կողմից, բացի ներկայացված տվյալները «ԱՐՄԵԴ» համակարգի տվյալների հետ համադրելը, որևէ այլ գործընթաց չի իրականացվել, որը հնարավորություն կընձեռեր ստանալու բավարար ապացույցներ՝ ծախսերի արժանահավտության գնահատման ժամանակ:

Իրականացված հաշվեքննության շրջանակներում բժշկական կազմակերպությունների կողմից փաստացի կատարողականի և դրա դիմաց Նախարարության կողմից կատարված վճարումների համապատասխանությունն ու արժանահավատությունը ստուգելու նպատակով իրականացվել է «ԱՐՄԵԴ» համակարգի կատարողականի տվյալների համադրում Գանձապետական համակարգի ԼՍ-Ֆայնանս համակարգի տվյալների հետ: Հաշվի առնելով այն, որ ծրագրային բյուջետավորման շրջանակներում ֆինանսավորումը իրականացվում է ըստ միջոցառումների, յուրաքանչյուրի համար առանձին գանձապետական հաշվի միջոցով, կատարողականի ուսումնասիրությունը ևս կատարվել է ըստ առանձին միջոցառումների՝ Նախարարության և բժշկական կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի շրջանակներում

մատուցված ծառայությունների հիման վրա: Իրականացված ուսումնասիրության արդյունքներն ըստ առանձին միջոցառումների ներկայացվել է ստորև:

1. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ միջոցառում

«Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը բաղկացած է 17 ենթամիջոցառումներից (քառանիշ դասակարգում), որոնց իրականացման համար 2021թ. դրամարկղային ծախսը կազմել է 27,837,384.9 հազ. դրամ, իսկ ծառայություն մատուցել են ընդհանուր թվով 441 ԲԿ-ներ :

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վճարման համար հիմք հանդիսացող էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի և տվյալ միջոցառման գանձապետական հաշվից կատարված վճարումների մեջ առկա է տարբերություններ:

ՀՎՀՀ	Բժշկական կազմակերպություն	Վճարում 900011018851 հաշվեհամարից	ԱՐՄԵԴ կատարողական	Տարբերություն
01503749	Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն ՓԲԸ	3,229,000	2,973,000	256,000
06940058	Գուգարքի ԱԱՊԿ ՊՈԱԿ	27,848,095	27,858,542	(10,447)
04220723	Ազատավանի ԱԱՊԿ ՊՈԱԿ	33,933,000	33,946,609	(13,609)
08601459	Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ	22,672,100	22,688,475	(16,375)
05205403	Լիլիդենտիս ՍՊԸ	9,219,500	9,235,957	(16,457)
02254002	Կարմիր բլուր պոլիկլինիկա ՓԲԸ	132,003,700	132,021,153	(17,453)
01508606	Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ	-	66,000	(66,000)
00497594	Բժիշկ էյջ ընդ էմ ՍՊԸ	2,851,800	2,955,916	(104,116)
04224354	Մաստերֆարմ ՍՊԸ	143,308,800	144,121,718	(812,918)
04104551	Վեդու ծննդատուն ՓԲԸ	10,857,386	13,122,417	(2,265,031)
05500832	Գյումրու ծննդատուն ՓԲԸ	5,279,677	8,366,485	(3,086,808)

Ինչպես երևում է աղյուսակից «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի տարեկան կատարողականը կազմել է 2,973.0 հազ.դրամ, սակայն միջոցառման շրջանակներում փաստացի վճարումը կազմել է 3,229.0 հազ.դրամ, կամ կատարողականից ավելի է 256.0 հազ. դրամով: Մի շարք դեպքերում էլ արձանագրվել է փաստացի հաստատված կատարողականից պակաս վճարում:

ԱՆ ղիրքորոշում: «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ-ի կատարողականի և վճարման տարբերությունը պայմանավորված է ՊԱԳ-ի կողմից կատարված կատարողականի ճշգրտմով: Կազմակերպությունը տարբերության չափով՝ 256.000 դրամ, վերականգնել է ՀՀ պետական բյուջե (վճարման հանձնարարագիրը կցվում է):

Հաշվեքննողի արձագանք: Ընդունվել է ի գիտություն:

Նախարարությունում իրականացված նախորդ հաշվեքննությունների ընթացքում արձանագրվել էր, որ Գյումրու ծննդատուն ՓԲԸ-ի պակաս ֆինանսավորումը պայմանավորված է եղել Գյումրու ԲԿ ՓԲԸ-ի հետ միավորվելով, որի արդյունքում վճարումը կատարվել է Գյումրու ԲԿ ՓԲԸ-ին:

2. Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ

«Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը բաղկացած է 2 ենթամիջոցառումներից, որի իրականացման համար 2021թ. դրամարկղային ծախսը կազմել է 6,925,610.9 հազ. դրամ, իսկ ծառայություն մատուցող ԲԿ-ների թիվը եղել է 50:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վճարման համար հիմք հանդիսացող էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի և տվյալ միջոցառման գանձապետական հաշվից կատարված վճարումների մեջ առկա է տարբերություններ:

ՀՎՀՀ	Բժշկական կազմակերպություն	Վճարում 900011103240 հաշվեհամարից	ԱՐՄԵԴ կատարողական	Տարբերություն
05539526	Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ	50,253,600	45,173,100	5,080,500
05204539	Ապարան բժշկական կենտրոն ՓԲԸ	33,034,300	29,244,500	3,789,800
01202252	Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ՓԲԸ	803,587,400	801,227,880	2,359,520
03804631	Մասիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	40,446,900	39,214,300	1,232,600
01564591	Իռ-Վինգ ՍՊԸ	30,092,300	29,625,300	467,000
09705024	Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ	7,201,800	6,866,500	335,300
06406902	Ստեփանավանի բժշկական կենտրոն ՓԲԸ	41,749,000	41,444,000	305,000
00403857	Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ	1,055,334,400	1,057,834,420	(2,500,020)
05500832	Գյումրու ծննդատուն ՓԲԸ	35,239,400	40,319,900	(5,080,500)

Գյումրու ծննդատուն ՓԲԸ-ի պակաս ֆինանսավորումը և Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի նույն չափով ավելի ֆինանսավորումը պայմանավորված է նշված 2 ԲԿ-ների միավորումով:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ «Էրեբունի ԲԿ» ՓԲԸ-ին 2021թ. կատարողականից պակաս է վճարվել 2,500.02 հազ. դրամ, և սա այն դեպքում, երբ «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման ֆինանսավորումը իրականացվում է օֆերտայի պայմանագրի հիմքով և ֆինանսավորման սահմանափակումներ կիրառելի չեն: Մինչև նույն ժամանակ, ինչպես ներկայացվել է աղյուսակում, մի շարք դեպքերում արձանագրվել են կատարողականի և վճարման միջև տարբերություններ, ինչը նշանակում է, որ իրականացված վճարումը գերազանցում է համակարգի փաստացի կատարողականը:

ԱՆ դիրքորոշում: Պեղք է նշել, որ չնայած «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման ֆինանսավորումը իրականացվում է պայմանագրային գումարի չսահմանափակման (օֆերտային) սկզբունքով, սակայն միջոցառման վրա գործում են առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 11-ի «Ծննդաբերության ֆինանսավորման բարդության խմբերը և չափաբաժինները հաստատելու և առողջապահության նախարարի 2012 թվականի հուլիսի 30-ի N 1760-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» No 331-Ա հրամանով հաստատված սահմանափակումները: Կատարողականների և վճարումների տարբերությունները (ավել և պակաս) պայմանավորված են ՊԱԳ-ի կողմից կատարված կատարողականների ճշգրտմանով: Փաստացի կատարողականների դիմաց ֆինանսավորումից հետո կատարողականների ճշգրտման արդյունքում առաջացած տարբերությունների չափով այլ միջոցառումներից կազմակերպությունները համապատասխանաբար պակաս են վճարվել, իսկ «Էրեբունի ԲԿ» ՓԲԸ-ի ֆինանսավորումը իրականացվել է հաշվի առնելով վերը նշված հրամանով նախատեսվող կատարողականի ճշգրտումը:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ տվյալ միջոցառման շրջանակներում կատարված ավելի վճարումը չի կարող փոխհատուցվել մեկ այլ միջոցառման պակաս վճարումով:

3. Շտապ բժշկական օգնության ծառայություններ

«Շտապ բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը բաղկացած է 1 ենթամիջոցառումից, որի իրականացման համար 2021թ. դրամարկղային ծախսը կազմել է 4,934,512.0 հազ. դրամ, որի շրջանակներում համապատասխան ծառայություններ են մատուցել ընդհանուր թվով 70 ԲԿ-ներ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վճարման համար հիմք հանդիսացող էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի և տվյալ միջոցառման գանձապետական հաշվից կատարված վճարումների մեջ առկա են եղել տարբերություններ:

ՀՎՀՀ	Բժշկական կազմակերպություն	ԱՐՄԵԴ կատարողական	Վճարում 900011103265	Տարբերություն
02235034	Սուրբ Աստվածամայր ԲԿ ՓԲԸ	1,408,729,502	1,408,605,200	(124,302)
01503448	Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հիմնադրամ	1,566,638,170	1,566,355,100	(283,070)
06406902	Ստեփանավանի բժշկական կենտրոն ՓԲԸ	23,006,000	22,701,000	(305,000)
09705024	Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ	18,279,200	17,943,900	(335,300)
01564591	Իռ-Վինգ ՍՊԸ	38,130,200	37,663,200	(467,000)
00009615	Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ ՍՊԸ	2,567,126,165	2,566,640,100	(486,065)
05500832	Գյումրու ծննդատուն ՓԲԸ	1,819,680	1,166,800	(652,880)
03804631	Մասիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	152,960,540	151,727,700	(1,232,840)
01202252	Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ՓԲԸ	380,923,310	378,563,800	(2,359,510)

Ինչպես երևում է աղյուսակից, ներկայացված դեպքերում 2021թ. արդյունքներով ԲԿ-ների կողմից ներկայացված և փաստացի հաստատված կատարողականների ցուցանիշներից պակաս վճարում է իրականացվել:

➤ **Դեպքերի անհատական վարում (case management)**

Հաշվեքննության ստանդարտների համապատասխան իրականացված ընտրանքում ներառված «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 11,050,670.68 հազ. դրամ)», «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 5,784,228.49 հազ. դրամ)», «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 23,394,265.15 հազ. դրամ)», «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ (դրամարկղային ծախս՝ 6,580,977.62 հազ. դրամ)» միջոցառումների իրականացումը կազմակերպվում է ԲԿ-ների կողմից իրականացված դեպքերի անհատական վարման (case management) միջոցով:

Միջոցառում	Հոդված	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
ՀՀ-ում կորոնավիրուսային (COVID-19) խարժեվման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում	- Այլ ծախսեր	-	27,744,225.70	27,744,225.70	28,148,544.89
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	2,296,927.10	7,313,432.18	7,224,556.40	6,069,680.33
Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	10,500,000.00	11,070,000.00	11,050,670.68	11,050,670.68
Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4,370,000.00	5,797,160.60	5,784,228.49	5,784,228.49
Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	19,100,000.00	23,550,483.90	23,394,265.15	23,394,265.15
Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ	- Այլ նպաստներ բյուջեից	3,577,217.30	6,708,255.90	6,580,977.62	6,580,977.62

ՀՀ առողջապահության նախարարի 20.03.2019թ. թիվ 675-Ա հրամանով կանոնակարգվում է Նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և բժշկական կազմակերպությունների միջև կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ Կատարող) կողմից իրականացված դեպքերի անհատական վարման (case management) հարաբերությունները:

Համաձայն ընթացակարգի 2-րդ բաժնի՝ հիվանդանոցային կամ ամբուլատոր պայմաններում անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման դեպքերի անհատական վարման (case management) շրջանակներում Կատարողն առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով իրականացնում է նախնական հարցում՝ հարցմանը կցելով.

- ա. շահառուի անձը հաստատող փաստաթուղթը (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց դեպքում՝ զինվորական գրքույկը),
- բ. շահառուի կարգավիճակը հավաստող փաստաթուղթը,
- գ. պետական պատվերով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով ուղեգիրը (առկայության դեպքում) կամ շտապ օգնության ուղեկցող թերթիկը, կամ Կատարողի ընդունարանի բժշկի խորհրդատվական թերթիկը,
- դ. սույն կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունում թվարկած փաստաթղթերում պետք է արտացոլվեն պացիենտի նախնական ախտորոշումը, բժշկական ծառայության վերաբերյալ համապատասխան բժշկական ցուցումը և դեպքի

անհետաձգելի լինելու հիմքերը, դրանց բացակայության կամ թերի լինելու դեպքում կցվում է վերոնշյալ տեղեկատվությունը պարունակող լրացուցիչ փաստաթուղթը, ե. ուռուցքաբանական հիվանդությունների վիրահատական բժշկական օգնության դեպքում՝ չարորակ նորագոյացությունը հավաստող (տրված նեղ մասնագիտական ծառայություն իրականացնող կազմակերպության կամ մասնագետի կողմից) բժշկական փաստաթուղթը:

Պատվիրատուն Անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման դեպքում 1 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է նախնական հարցման հաստատում կամ մերժում:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ «ԱՐՄԵԴ» համակարգում իրականացվել է նախնական հարցման թվով 296 758 դեպք, որից նախնական հաստատում ստացել է 249 325 հայց, իսկ 47 433 հայց մերժվել է: Ավելին, նախնական հարցման գնահատման ժամանակ փորձագետ/մշտադիտարկողի կողմից բժշկական գնահատում չի իրականացվել, այլ գնահատվել է միայն քաղաքացու համապատասխանությունը պետական պատվերից օգտվելու իրավունքին, և համապատասխան ուղեգրի առկայությանը: Արդյունքում, նշված աշխատանքի իրականացման մեջ բացակայել է բժշկական բաղադրիչը, ինչը նշանակում է որ նույն աշխատանքը կարող է կատարվել նաև այլ մասնագետի կողմից, իսկ առավել նպատակահարմար և արդյունավետ կլինի ծրագրային փաթեթի միջոցով գործընթացի ողջ ավտոմատացումը:

Ընթացակարգի 3-րդ կետի համաձայն՝ Կատարողը նախնական հարցման հաստատում ստանալուց հետո սահմանված ծավալով բժշկական ծառայությունները փաստացի մատուցելուց (դուրս գրումից) հետո առավելագույնը 20 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Հայց (ոչ ուշ քան ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը): Պատվիրատուն Հայցը ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է Հայցը:

Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, կազմակերպությունների կողմից ներկայացվում է կատարված աշխատանքների մասին հաշվետվություն, որը փորձագետ/մշտադիտարկողի կողմից համեմատվում է «ԱՐՄԵԴ» համակարգի տվյալների հետ, ստուգվում է ամփոփ ցուցանիշի համապատասխանությունը և փոխանցվում ՊԱԳ-ի ֆինանսական ապահովման բաժին՝ վճարումներն իրականացնելու նպատակով: Չնայած ֆինանսավորումը հաստատվում է ըստ առանձին քեյսերի, սակայն հանձնման ընդունման ժամանակ երկկողմանի ստորագրվում և հաստատվում է միայն ամփոփ կատարողականը՝ մեկ թվով, իսկ քեյսերի մակարդակում հաստատում և վավերացում չի իրականացվում, ինչը նվազեցնում է հետագայում հետհսկողական միջոցառումների իրականացման հնարավորությունն ու արդյունավետությունը:

Դեպքերի անհատական վարում իրականացվում է ՀՀ ԱՆ ՊԱԳ Փորձագիտական գնահատման և մշտադիտարկման առաջին և երկրորդ բաժինների կողմից, 2021թ. ընթացքում փաստացի աշխատանքները իրականացվել է թվով 30 աշխատակիցների կողմից: Գործընթացի իրականացման նպատակով ՊԱԳ-ի պետի 2021թ. կարգադրություններով սահմանվել է բժիշկ փորձագետներին և ֆինանսիստ փորձագետներին կցագրված բժշկական հաստատությունների ցանկը:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2021թ. դեպքերի անհատական վարման շրջանակներում ՊԱԳ-ի կողմից «ԱՐՄԵԴ» ծրագրի միջոցով իրականացվել է ընդհանուր

թվով 245 126 գործառնություններ (ԲԿ-ների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրություն), որից 243 662-ը հաստատվել է, իսկ մերժված հայցերի թիվը եղել է ընդամենը 1464-ը: Ավելին, հաստատված դեպքերի շուրջ 27%-ը, կամ թվով 64 865 հայտեր (11,339,439.5 հազ. դրամ ընդհանուր արժեքով) փորձագետների կողմից չի ուսումնասիրվել և ծրագրի կողմից ավտոմատ հաստատվել է՝ պայմանավորված սահմանված վերջնաժամկետի լրանալու հետ:

Համաձայն ՊԱԳ-ի պետի կարգադրությունների՝ փորձագետների և մշտադիտարկողների միջև աշխատանքները բաշխվել են ըստ բժշկական կազմակերպությունների և մարզերի: «ԱՐՄԵԴ» ծրագրի, հաստիքացուցակի, փորձագետների և մշտադիտարկողների անհատական աշխատանքային ստաժի և մասնագիտությունների ուսումնասիրությունից և վերլուծությունից պարզվել է, որ համապատասխան աշխատանքի բաշխումը նպատակահարմար չէ քանի որ փաստացի ստացված տարբեր բնույթի հայտերը առավելագույն արդյունավետությամբ չի կարող վերլուծվել այդ ոլորտի նեղ մասնագետ չհանդիսացող փորձագետի կողմից:

Փորձագետները, լինելով մեկական ոլորտի նեղ մասնագետ, հաստատել են 1-5 տասնյակ հիվանդությունների խմբերի հայտերը: Ընդ որում, այդ հաստատումը կատարվել է հիվանդությունների խմբերի գերակշիռ մասի համար կլինիկական ուղեցույցների բացակայության պարագայում: Մասնավորապես.

- Ա.Մ.-նը՝ հանդիսանալով «Սննդի հիգիենայի» մասնագետ փաստացի որպես բժիշկ փորձագետ վերլուծել և հաստատել է 31 ԲԿ-ներից ստացված թվով 4 042 հայտ, որի մեջ ներառվել են օրինակ՝ Ուրոլոգիական, Ուռուցքաբանական, Ինտելեկտուալ սրտաբանական, Կենսաքիմիական-բիոքիմիական, վարակիչ հիվանդությունների խմբերում ներառված հայտերը:
- Ա.Ս.-ն՝ չլինելով բժիշկ և հանդիսանալով «Արդյունաբերության պլանավորման» մասնագետ, աշխատանքի ընդունվելու պահին չունենալով բժշկության ոլորտի ստաժ, փաստացի որպես մշտադիտարկող բժիշկ փորձագետ պետք է վերլուծեր և հաստատեր 7 ԲԿ-ներից ստացված հայտերը, սակայն համաձայն «ԱՐՄԵԴ» համակարգից արտահանված տվյալների ոչ մի հայտ չի հաստատել:
- Կ.Թ.-ն՝ հանդիսանալով «Սիրտ-անոթային բուժման մեթոդների» մասնագետ, աշխատանքի ընդունվելու պահին ունենալով ընդամենը 2 տարվա աշխատանքային ստաժ, որից ընդամենը 1 տարին բժշկության ոլորտի, փաստացի որպես գլխավոր փորձագետ պետք է վերլուծեր և հաստատեր 4 ԲԿ-ներից ստացված հայտերը: Համաձայն «ԱՐՄԵԴ» համակարգից արտահանված տվյալների՝ վերջինս հաստատել է թվով 3 142 հայտ՝ տարբեր հիվանդությունների գծով, որոնց թվին է դասվել Գենետիկական, Իմունաբանական, Գինեկոլոգիական, ընդհանուր վիրաբուժական և այլն:

ԱՆ դիրքորոշում: 2008թ. մարտի 27-ի «ՀՀ-ում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» N276-Ն որոշման համաձայն ՀՀ-ում սահմանվել են թվով 97 բժշկական օգնության և սպասարկման տեսակներ իրենց ենթաբաժնիներով, որի պատճառով անհնար է աշխատանքների կատարման համար ունենալ թվով 97 նեղ մասնագիտացված բժիշկ-փորձագետներ: Մինչև ժամանակ պետք է նշել, որ լրացուցիչ մասնագիտական պարզաբանման անհրաժեշտության դեպքում ՊԱԳ-ի կողմից պարբերաբար գրավոր կամ բանավոր հարցումներ են արվում Առողջապահության նախարարության տվյալ ծառայության գծով խորհրդատուներին:

Հաշվեքննողի արձագանք: Ներկայացված պարզաբանումը ևս մեկ անգամ հիմնավորում է հաշվեքննողների կողմից ներկայացված այն դիրքորոշումը, որ հիվանդությունների խմբերի գերակշիռ մասի

համար կլինիկական ուղեցույցների բացակայության պարագայում այդ ոլորտի նեղ մասնագետ չհանդիսացող փորձագետի կողմից հայտերի գնահատումը չի կարող լինել արդյունավետ:

Հաշվեքննությանը արձանագրվել է նաև, որ հայտերը ուսումնասիրողների հաստատողների (փորձագետ և մշտադիտարկող) կողմից աշխատանքները իրականացվել են ոչ համաչափ: Մասնավորապես, համաձայն «ԱՐՄԵԴ» համակարգի տվյալների 2021թ. Ա.Գ.-ի կողմից հաստատվել է թվով 2 021 հայտ, Ա.Ա.-ի կողմից՝ թվով 3 340 հայտ, Կ.Թ.-ի կողմից՝ 3 142 հայտ, այնինչ այլ աշխատակիցների կողմից ուսումնասիրված և հաստատված հայտերը մի քանի անգամ ավելի են, օրինակ՝ Դ.Ս.-ի կողմից հաստատվել է 12 006 հայտ, Մ.Ք.-ի կողմից՝ 13 605 հայտ, Ն.Պ.-ի կողմից՝ 19 396 հայտ, Գործակալության պետի կողմից՝ 327 հայտ, իսկ Ա.Ա.-ն ոչ մի հայտ չի հաստատել:

Գործողություն կատարող	Հաստատված հայտերի քանակը	Մերժված հայտերի քանակը	Հաստատված հայտերի ընդհանուր գումարը	Մերժված հայտերի ընդհանուր գումարը
Ավտոմատ հաստատված/մերժված	64,865	596	11,339,439,484	88,107,580
Ա.Գ.	2,021	5	384,431,320	1,259,400
Ա. Մ.	6,859	28	1,428,534,618	5,892,820
Ա. Մ.	4,042	24	784,804,926	4,027,800
Ա.Պ.	7,888	70	1,251,482,470	7,506,100
Ա. Խ.	5,145	4	879,281,550	406,000
Ա. Ա.	3,340	5	394,010,350	277,000
Գ. Ա.	7,937	161	1,308,748,674	21,457,300
Գ. Հ.	4,724	93	1,145,204,700	11,425,700
Դ. Ս.	12,006	17	1,782,882,620	1,979,780
Է. Գ.	6,633	32	1,246,591,120	4,518,500
Է. Մ.	8,556	15	1,251,944,770	1,240,500
Ծ. Վ.	327	2	42,424,120	185,000
Կ. Թ.	3,142	30	440,868,880	4,040,200
Կ. Ա.	7,158	67	1,024,843,500	4,833,900
Կ. Մ.	186	3	29,026,750	454,000
Կ. Մ.	8,448	19	929,839,110	2,262,000
Հ. Ա.	4,156	-	511,960,540	-
Մ. Հ.	1,162	3	425,898,500	641,400
Մ. Ք.	13,605	95	2,580,133,785	12,965,638
Մ. Հ.	5,895	16	1,072,132,950	3,676,600
Մ. Վ.	5,112	4	597,678,495	112,001
Ն. Ա.	51	-	10,083,700	-
Ն. Պ.	19,396	25	2,801,823,352	2,900,580
Ն. Խ.	3,550	3	404,877,420	161,000
Ռ. Հ.	8,098	77	1,023,060,372	10,902,900
Ս. Մ.	7,157	5	1,045,058,170	485,600
Ս. Շ.	144	-	20,182,000	-
Ս. Պ.	3,355	16	675,520,190	3,127,000
Ս. Հ.	6,119	11	1,256,286,430	1,364,700
Ս. Հ.	9,301	22	1,225,234,090	2,569,500

Ա.Ն.	3,284	16	1,173,245,350	7,002,800
ԸՆԴԱՄԵՆԸ	243,662	1,464	40,487,534,306	205,783,299

2021թ. արդյունքներով 1 աշխատակցին բաժին ընկնող աշխատանքային մեկ օրվա միջին հայտերի քանակը կազմել է ընդամենը 32-ը:

ԱՆ դիրքորոշում: Հայտերի հաստատման գործընթացի արձանագրությունում նշված մեկ աշխատակցին բաժին ընկնող աշխատանքային մեկ օրվա միջին հայտերի քանակը (32) չի համապատասխանում իրականությանը, քանզի հաշվի չի առնված 2021 թվականի 250 աշխատանքային օրերի ընթացքում յուրաքանչյուր փորձագետին օրենքով սահմանված հասանելիք 24 աշխատանքային օրվա արձակուրդը, քաղձառայողի պարտադիր վերապատրաստումների օրերը, այլ աշխատանքներում, այդ թվում ուսումնասիրություններում ներգրավվածությունը:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ 2021թ. ոչ բոլոր քաղձառայողներն են լիարժեք օգտվել ամենամյա արձակուրդից, ինչպես նաև դրանց ներառումը հաշվեքննության արդյունքների վրա էական ազդեցություն չի ունենում:

Պատվիրատուի կողմից Հայցը մերժվում է.

- 1) սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության կամ թերի լինելու, ինչպես նաև Ծրագրին վերաբերվող գործող իրավական ակտերի պահանջների անհամապատասխանության դեպքում,
- 2) ներկայացված և մատուցված բժշկական ծառայության կամ դրանց ծավալների անհամապատասխանության դեպքում,
- 3) հայցի սույն հավելվածի 2-րդ գլխի 3-րդ կետի 3-րդ ենթակետի, 3-րդ գլխի 4-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթների խախտման դեպքում,
- 4) հայցով ներկայացվել է ոչ արժանահավատ տեղեկություն կամ փաստաթուղթ,
- 5) Պատվիրատուի կողմից պացիենտի բացակայության փաստը հայտնաբերելու դեպքում (Կատարողին այցի, պացիենտին հեռախոսազանգի կամ այլ միջոցներով):

Մերժված հայցերի թիվը 2021թ. եղել է ընդամենը 1 464-ը, որը կազմել է ներկայացված հայցերի 0,6%-ը, իսկ մերժված հայտերի ֆինանսական արժեքը կազմել է 205,783,3 հազ. դրամ: Թվով 596 հայտ համակարգում չի արտացոլվել, թե որ աշխատակցի կողմից է մերժվել: Համեմատության համար նշենք, որ միայն Փորձագիտական գնահատման և մշտադիտարկման առաջին և երկրորդ բաժինների աշխատանքի վարձատրության (ներառյալ պարգևավճարների և հավելավճարների) ֆոնդը կազմել է 123,428.3 հազ. դրամ:

ԱՆ դիրքորոշում: Բժիշկ փորձագետի կողմից հարցումների մերժումից հետո դեպքերի գերակշիռ մասում բժշկական կազմակերպությունները իրականացնում են հարցման չեղարկում, կամ՝ նախնական ներկայացված ծառայության փոփոխություն, ինչից հետո դեպքերը Արմեդ էլեկտրոնային առողջապահության համակարգում չեն արտացոլվում որպես «մերժված», արդյունքում արձանագրվում է մերժումների «ցածր» ցուցանիշ:

Հաշվեքննողի արձագանք: Չի ընդունվել, քանի որ գնահատումը իրականացվել է ներկայացված համակարգում արտացոլված տվյալների հիման վրա, իսկ բացակայող տեղեկատվության հիման վրա կատարվող եզրահանգումները հիմնավոր չեն կարող համարվել:

Իրականացված հաշվեքննության շրջանակներում ԲԿ-ների կողմից փաստացի կատարողականի և դրա դիմաց Նախարարության կողմից կատարված վճարումների համապատասխանությունն ու արժանահավատությունը ստուգելու նպատակով իրականացվել է «ԱՐՄԵԴ» համակարգի կատարողականի տվյալների համադրում Գանձապետական համակարգի ԼՍ-Ֆայնանս համակարգի տվյալների հետ: Հաշվի առնելով այն, որ ծրագրային բյուջետավորման շրջանակներում ֆինանսավորումը իրականացվում է ըստ միջոցառումների, յուրաքանչյուրի համար առանձին

զանձապետական հաշվի միջոցով, կատարողականի ուսումնասիրությունը ևս կատարվել է ըստ առանձին միջոցառումների՝ Նախարարության և ԲԿ-ների միջև կնքված պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների հիման վրա: Իրականացված ուսումնասիրության արդյունքներն ըստ առանձին միջոցառումների ներկայացվել է ստորև:

1. Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ

«Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը բաղկացած է 4 ենթամիջոցառումից, որի իրականացման համար 2021թ. դրամարկղային ծախսը կազմել է 6,580,977.6 հազ. դրամ, որի շրջանակներում ծառայություններ են մատուցել ընդհանուր թվով 118 բժշկական կազմակերպություն:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վճարման համար հիմք հանդիսացած էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի և տվյալ միջոցառման զանձապետական հաշվից կատարված վճարումների մեջ տարբերություններ չեն արձանագրվել:

2. Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ

«Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը բաղկացած է 1 ենթամիջոցառումից, որի իրականացման համար 2021թ. դրամարկղային ծախսը կազմել է 11,050,670.6 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վճարման համար հիմք հանդիսացող էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի և տվյալ միջոցառման զանձապետական հաշվից կատարված վճարումների մեջ առկա են մի շարք տարբերություններ:

ՀՎՀՀ	Բժշկական կազմակերպություն	ԱՐՄԵԴ կատարողական	Վճարում 900011103265	Տարբերություն
02235034	Սուրբ Աստվածամայր ԲԿ ՓԲԸ	1,408,729,502	1,408,605,200	(124,302)
01503448	Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հիմնադրամ	1,566,638,170	1,566,355,100	(283,070)
06406902	Ստեփանավանի բժշկական կենտրոն ՓԲԸ	23,006,000	22,701,000	(305,000)
09705024	Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ	18,279,200	17,943,900	(335,300)
01564591	Իռ-Վինգ ՍՊԸ	38,130,200	37,663,200	(467,000)
00009615	Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ ՍՊԸ	2,567,126,165	2,566,640,100	(486,065)
05500832	Գյումրու ծննդատուն ՓԲԸ	1,819,680	1,166,800	(652,880)
03804631	Մասիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	152,960,540	151,727,700	(1,232,840)
01202252	Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ՓԲԸ	380,923,310	378,563,800	(2,359,510)

Ինչպես ներկայացված է աղյուսակում, մի շարք դեպքերում տարվա արդյունքներով կազմակերպությունների կողմից ներկայացված և Նախարարության կողմից փաստացի ընդունված կատարողականների դիմաց վճարվել է կատարողականից պակաս գումար:

ԱՆ դիրքորոշում: Բաժինների աղյուսակներում ներառված կազմակերպությունների «պակաս» վճարումները պայմանավորված են տարեկան պայմանագրային գումարների գերազանցումներով: Ֆինանսավորումները իրականացվել են ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N2 հավելվածով սահմանված սկզբունքով, այն է՝ ֆինանսավորումն իրականացվում է բժշկական օգնության և սպասարկման փաստացի կատարված ծավալների դիմաց, տվյալ ծառայության համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված գներով, սակայն ոչ ավելի, քան այդ ծառայության մասով հաստատված տարեկան պայմանագրային գումարը:

Հաշվեքննողի արձագանք: Ընդունվել է ի գիտություն:

3. Սոցիալապես անապահով և հապուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ

«Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումը բաղկացած է 4 ենթամիջոցառումներից, որոնց իրականացման համար 2021թ. ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց կատարված վճարումների դրամարկղային ծախսը կազմել է 23,394,265.1 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վճարման համար հիմք հանդիսացած էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի և տվյալ միջոցառման գանձապետական հաշվից կատարված վճարումների մեջ առկա են մի շարք տարբերություններ:

ՀՎՀՀ	Բժշկական կազմակերպություն	Վճարում 900011103141	ԱՐՄԵԴ կատարողական	Տարբերություն
03540036	Սուրբ Մարիամ ՍՊԸ	375,000	395,000	(20,000)
02596604	Ռադիոլոգոտոպների արտադրության կենտրոն ՓԲԸ	19,752,400	19,900,000	(147,600)
08417304	Գավառի ԲԿ ՓԲԸ	92,507,700	92,965,700	(458,000)
05500832	Գյումրու ծննդատուն ՓԲԸ	5,359,000	5,934,000	(575,000)
05510611	Գյումրու պաթոլոգանատոմիական լաբորատորիա ՓԲԸ	8,034,000	10,920,000	(2,886,000)

Ինչպես ներկայացված է աղյուսակում, մի շարք դեպքերում տարվա արդյունքներով կազմակերպությունների կողմից ներկայացված և Նախարարության կողմից փաստացի ընդունված կատարողականների դիմաց վճարվել է կատարողականից պակաս գումար:

➤ ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում

«Կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակներում ԲԿ-ների ֆինանսավորումը իրականացվել է 2 սկզբունքով: Վերապրոֆիլավորված հիվանդանոցների ֆինանսավորումը իրականացվել է փաստացի կատարված ծախսերի փոխհատուցման միջոցով, իսկ մյուս սկզբունքի դեպքում՝ դեպքով պայմանավորված ֆինանսավորման միջոցով:

Վերապրոֆիլավորված ԲԿ-ների կողմից կատարված աշխատանքները էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգում չեն արտացոլվել, իսկ ֆինանսավորումը իրականացվել է ԲԿ-ների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացված ծախսերը հաստատող փաստաթղթերի /հաշիվ-ապրանքագիր/ հիման վրա: Հաշվի առնելով հաշվետվողականության այս մեխանիզմի ոչ լիարժեքությունը, դրա նկատմամբ ընթացիկ հսկողության բացակայությունը, վերապրոֆիլավորված ԲԿ-ների կողմից կատարված ծախսերի համապատասխանության և արժանահավատության գնահատման վերաբերյալ բավարար աուդիտորական ապացույցներ հնարավոր չի եղել ձեռք բերել:

Ինչ վերաբերվում է դեպքով պայմանավորված ֆինանսավորման շրջանակներում գանձապետական համակարգի միջոցով իրականացված վճարումներին, ապա համաձայն ԼՍ-Ֆայնանս համակարգում առկա տեղեկատվության, սույն միջոցառման շրջանակներում ծառայությունների մատուցման պայմանագրերը գանձապետական համակարգ չեն մուտքագրվել: Կազմակերպությունների կողմից «ԱՐՄԵԴ» համակարգի միջոցով ներկայացված կատարողականները ներկայացված է ստորև, իսկ կատարված փաստացի վճարումների համապատասխանության վերաբերյալ բավարար տվյալներ հնարավոր չի եղել ձեռք բերել:

ՀՎՀՀ	Բժշկական կազմակերպություն	«ԱՐՄԵԴ» համակարգի կատարողական
00124396	Մեդլայն կլինիկ ՍՊԸ	1,712,400,900
00403857	Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ	129,275,000
01202252	Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ ՓԲԸ	120,735,000
01203375	Արմենիա ՀԲԿ	622,200,000
01222567	Նատալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն	89,920,000
01503448	Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հիմնադրամ	130,468,000
01508793	Նորք Մարաշ ԲԿ ՓԲԸ	7,060,000
01564591	Իո-Վինգ ՍՊԸ	311,520,000
05539526	Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ	47,820,000
06805261	Սպիտակի բժշկական կենտրոն ՓԲԸ	42,875,000
09420382	Կապանի բժշկական կենտրոն ՓԲԸ	4,435,000

Միևնույն ժամանակ, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ «ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակներում դեպքերի անհատական վարում չի իրականացվել, և ներկայացված հաշվետվությունների արժանահավատությունը ստուգելու ընթացիկ հսկողական միջոցառումներ չեն իրականացվել:

➤ **Ընթացիկ հսկողություն**

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2021թ. Նախարարության գործունեության նկատմամբ ներքին աուդիտ չի իրականացվել, առկա չի եղել նաև ներքին հսկողական մեխանիզմ կամ դրա սահմանման վերաբերյալ որևէ իրավական ակտ:

Ներքին հսկողական միակ միջոցը հանդիսացել է ԱՆ նախարարի 2020թ. հունվարի 14-ի թիվ 85-Ա հրամանի հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 2.3.3 կետի պահանջը՝ Պատվիրատուն իրավունք ունի պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում:

Նախարարի 2020թ. հունվարի 14-ի թիվ 85-Ա հրամանի հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 2.3.2. կետի համաձայն 500 մլն և ավելի տարեկան պայմանագրային ծավալ ունեցող բժշկական կազմակերպություններում Նախարարությունը կարող է ունենալ մշտական ներկայացուցիչ: Ներկայացուցիչների աշխատակարգը, պարտականությունները և իրավունքները կարգավորվում է ԱՆ նախարարի համապատասխան հրամանով: 2020թ. թեև Նախարարությունը ընդհանուր թվով 36 կազմակերպությունների հետ ունեցել է 500մլն դրամը գերազանցող պայմանագրեր, սակայն դրանցից որևէ մեկում մշտական ներկայացուցիչ չի ունեցել:

Հարկ է ընդգծել, որ ԱՆ նախարարի 2020թ. հունվարի 14-ի թիվ 85-Ա հրամանի հաստատված պայմանագրի օրինակելի ձևի 2.3.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում:

Հաշվեքննությունն իրականացնող խմբին տրամադրված տեղեկատվության համաձայն, 2021թ. Նախարարության կողմից բուժփիմնարկներում ուսումնասիրություններ չեն իրականացվել, իսկ էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի միջոցով իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունների արդյունքները ներկայացված են ստորև:

	Անվանում	Պայմանագրային գումար	Նվազեցման ենթակա գումար	Նկարագրություն
1	Արմենիա ՀԲԿ	55,207,700	1,029,000	869000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305, 1308 ծրագրից 169000 նվազեցվել է
2	Զենոնա ՍՊԸ	126,000	72,000	1328 ծրագրից նվազեցվել է 72000
3	Վ.Ավագյանի անվան ԲԿ ՍՊԸ	74,762,900	1,480,200	1378200 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305, 102000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1321
4	Իզմիրյան ԲԿ ՓԲԸ	66,820,200	944,000	794000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305, 150000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1321
5	Նատալի Ֆարմ ՍՊԸ Աստղիկ ԲԿ ՓԲԸ	147,256,873	16,241,196	16241196 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305
6	Արթմեդ ԲՎԿ ՓԲԸ	19,998,000	102,000	102000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305
7	Ս.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն ՓԲԸ	114,590,400	2,922,000	2082000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305, 840000 1308 ծրագրից նվազեցվել է
8	Մ. Հերացու անվան ՊԲՀ հիմնադրամ	48,857,700	520,000	520000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305
9	Միքայելյան Վիրաբուժության ինստիտուտ ՓԲԸ	50,271,500	396,000	200000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305, 196000 1308 ծրագրից նվազեցվել է
10	Գորիս ԲԿ ՓԲԸ	8,096,600	1,090,300	799000 տեղափոխվել է 1308 ծրագրից 1305, 291300 1308 ծրագրից նվազեցվել է
	Ընդամենը	585,987,873	24,796,696	

Ինչպես երևում է աղյուսակից, 2021թ. էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի միջոցով կատարողականներ ներկայացնող 440 ԲԿ-ներից Նախարարությունը մշտադիտարկում իրականացրել է ընդամենը 10-ում, իսկ մշտադիտարկման ծածկույթը կազմել է նշված ԲԿ-ների պայմանագրային գումարի ընդամենը 4.2 տոկոսը:

ԱՆ դիրքորոշում 1: Ինչ վերաբերվում է ԱՆ պետական առողջապահական գործակալության վերահսկողական մեխանիզմներին, ապա պետք է նշել, որ ՊԱԳ-ի փորձագիտական գնահատման և մշտադիտարկման 2 բաժինների կողմից (N 1 բաժին 15 (2 թափուր) հաստիք, N 2 բաժին 15 (3 թափուր) հաստիք) կողմից սպասարկվում է ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի 7 ծրագիր, որից 25 միջոցառում, որից 49 ենթամիջոցառում, որից դեպքերի անհատական վարում (Քեյս մենեջմենթ) է իրականացվում միայն 8 ենթամիջոցառումներով: 2021 թվականին նշված թվով 8 ենթամիջոցառումներով դեպքերի անհատական վարման շրջանակներում կազմակերպությունների կողմից կատարվել է թվով 359,667 նախնական հարցումներ, թվով 349,189 վերջնական հայցեր, ընդհանուր՝ 708,856 հարցում, փարեկան միջինում մեկ փորձագետի հաշվով՝ մոտ 28 355 դեպք:

ԱՆ դիրքորոշում 2: ՊԱԳ-ի վերը նշված 26 փորձագետները բացի վերը նշված 8 ենթամիջոցառումներով դեպքերի անհատական վարման աշխատանքներից սպասարկում են նաև 483 կազմակերպությունների կողմից մնացած 17 ենթամիջոցառումներով կատարվող աշխատանքները՝ ամենամյա հաշվետվությունների ընդունում, ուսումնասիրություն, ներկայացում ՊԱԳ-ի ֆինանսավորման ապահովման բաժին, մասնակցում են հրամանների նախագծերի կազմման, կառավարության որոշումների նախագծերի կազմման, գրությունների, հարցումների պատասխանների ձևավորման, հանդիպումների, վերապատրաստումների, առողջապահության նախարարությունում ստեղծված հանձնաժողովների, մշտադիտարկման, ուսումնասիրությունների, վերլուծությունների, կանխատեսումների, կազմ-մեթոդական աշխատանքներին:

Հաշվեքննողի արձագանք 1: Չի ընդունվել, քանի որ հաշվեքննությամբ արձանագրվել է, որ այդ հայտերի գերակշիռ մասը հաստատվել է ավտոմատ կերպով, և նման ընդհանրական հաշվարկները չեն կարող հիմք հանդիսանալ ծանրաբեռնվածության գնահատման համար:

Հաշվեքննողի արձագանք 2: Չի ընդունվել, քանի որ հարակից այլ աշխատանքների կատարումը չպետք է իրականացվի րվյալ մասնագետների պաշտոնի անձնագրով սահմանված գործառնությունների ոչ լիարժեք կատարման հաշվին:

Վերոնշյալ մշտադիտարկումների իրականացման համար առկա չի եղել որևէ մեթոդաբանություն կամ աշխատակարգ, ինչպես նաև առկա չի եղել ուսումնասիրության ենթակա օբյեկտի ընտրության որևէ չափորոշիչ: